ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 192-Ա «24» հունվարի 2023թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի Հ.78-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Մարինա Մինասյանի դիմումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.01.2023թ հ.13012023-01-0107 վկայականը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով 11.01.2023թ. հ.306 առուվաճառքի պայմանագիրը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.01.2023թ հ.13012023-01-0107 վկայականը.

1.Երևանի քաղաքապետի 2023 թվականի հունվարի 10-ի «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.689-Ա որոշման հիման վրա գույքերի փոխանակություն կատարելու մասին» հ.78-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանի 2-րդ պարբերության մեջ՝ «անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 06.10.2022թ. հ.06102022-01-0078 /գաղտնաբառ՝ KIBUFCC62VQC/» բառերը փոխարինել «անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.01.2023թ հ.13012023-01-0107 /գաղտնաբառ՝ VFP9WBHSU6F8/» բառերով.

2) որոշման նախաբանի 2-րդ, 3-րդ պարբերություններում և 1-ին կետում՝ «Էմիլ Մայիլյանին, Շավարշ Շահվերդյանին, Սոլթան Սասան Մոհամմադ Էսհաղին, Սերոջ Շահբազյանին, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող» բառերը փոխարինել «Մարինա Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող» բառերով.

3) որոշման 2-րդ կետում և 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում՝ «Էմիլ Մայիլյանի, Շավարշ Շահվերդյանի, Սոլթան Սասան Մոհամմադ Էսհաղիի և Սերոջ Շահբազյանի» բառերը փոխարինել «Մարինա Մինասյանի» բառերով:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ